[1] Դուրս գրման ամսաթիվ		
7	Նոյեմբեր	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
7	Նոյեմբեր	2019 թ.

Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	7298274635

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	
[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7	
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	6	9	0	2	0	8	7	/ 1

[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՄԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								

[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն	N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[20] Լրացուցիչ տվյալներ		

[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը			
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնապ. հարկ	Այդ թվում՝ ակցիզ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 68165419բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող՝
(անունը, ազգանունը)

07/11/2019 11:18:17

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

27 սեպտեմբերի 2019թ.

ք. Գյումրի

Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի Շիրակի մարզային քննչական վարչության ՀԿԳ ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ Վ.Բ.Սամվելյանս, քննարկելով վարույթումս քննվող 68165419 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Տ Ի

2019թ.-ի սեպտեմբերի 10 ին՝ ժամը 14:30-ին, Գյումրու ՇԲՕ կայանից ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին ահազանգ է ստացվել, որ Գյումրի քաղաքի Մ Սարգսյան փողոցի 15 տանից <<Գանգուղեղի փակ վնասվածք>> ախտորոշմամբ <<Գյումրի>> ԲԿ է տեղափոխվել 1931թ. ծնված Աղունիկ Սմբատի Հայրապետյանը:

Նույն օրը՝ ժամը 14:35-ին <<Գյումրի>> ԲԿ-ից ևս ահազանգ է ստացվել ոստկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժին, որ Գյումրի քաղաքի Մ.Սարգսյան փողոցի 15 տանից ծեծված վիճակում, շտապ բուժօգնության մեքենայով նշված բժշկական կենտրոն է բուժօգնության է տեղափոխվել Աղունիկ Սմբատի Հայրապետյանը:

Ահազանգերի կապակցությամբ ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնում նախապատրաստվել են նյութեր, որի ընթացքում Աղունիկ Հայրապետյանի դուստրը Գյումրի քաղաքի Պ.Սևակ 6 շենքի 2 բնակարանի բնակչուհի Հասմիկ Հովհաննեսի Ալեքսանյանը, հաղորդում և բացատրություն է տվել, որ 2019 թվականի սեպտեմբերի 10 ին՝ ժամը 14-ի սահմաններում, իրեն է զանգահարել եղբայրը՝ Գագիկ Հայրապետյանը և ասել, որ շտապ գնա մոր տուն, քանի որ որդին՝ Սմբատ Գագիկի Հայրապետյանը, ծեծում է իրենց մորը: Մայրը չի շնչում և անգիտակից վիճակում ընկած է հատակին, իսկ Սմբատը շարունակում է նրան ծեծել: Ինքը գնացել է Գյումրի քաղաքի Մ.Սարգսյան փողոցի 15 հասցեում գտնվող մոր տուն, որտեղ պարզել է, որ մայրն անկողնում ծանր վիճակում պառկած է: Մոր աչքերի և մարմնի տարբեր մասերին առկա են եղել բազմաթիվ կապտուկներ: Զարմիկը՝ Սմբատը, տանը չի եղել: Դրանից հետո դիմել է ոստիկանություն և հաղորդում տվել:

Աղունիկ Հայրապետյանը բացատրություն է տվել, որ երկու օր առաջ գիշերը ժամը՝ 24 ից մինչև 1-ն ընկած ժամանակահատվածում, իր հետ համատեղ բնակվող թոռը՝ Սմբատ Հայրապետյանն, ալկոհոլի ազդեցության տակ վերադառնալով տուն, իրենից 4000 << դրամ գումար է պահանջել: Ինքը գումար չունենալու պատճառով մերժել է նրան, սակայն Ս.Հայրապետյանը չի հավատացել, բարկացել է, հարձակվել է իր վրա, բռունցքներով բազմաթիվ հարվածներ հասցրել դեմքին, գլխին ու մարմնի տարբեր մասերին ասելով՝ <<զարգեմ կատակիս պառավ>> և սեռական բնույթի հայհոյանքներ է հնչեցրել իր հասցեին: Այնուհետև՝ իրեն անկողնուց քաշել, գցել է հատակին, երկու ձեռքերով բռնել է, իր պարանոցից, սեղմել, կրկնելով <<գնա մեռի> արտահայտությունները Աղունիկ Հայրապետյանը նշել է նաև, որ թոռը 2019 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 10 ն ընկած ժամանակահատվածում գումար է պահանջել իրենից և պարբերաբար դիտավորությամբ ծեծի ենթարկել իրեն՝ պատճառելով՝ ֆիզիկական ցավ և հոգեկան տառապանք: Ինքն անկարող է եղել դիմադրել նրան, չի կարողացել փախչել, որից օգտվել է Սմբատը և շարունակ

է գլխին, ինչի հետևանքով էլ ֆիզիկական ցավ է պատճառել: Իր մարմնի վրա առկա են բազմաթիվ վնասվածքներ:

10.09.2019թ <<Գյումրի>> ԲԿ-ի բժիշկ՝ Ա.Հովհաննիսյանի կողմից տրված տեղեկանքի համաձայն Աղունիկ Սմբատի Հայրապետյանի մոտ նախնական ախտորոշվել են <<գանգուղեղի և աջ թմբկաթաղանթի վնասվածքներ, մարմնի տարբեր տեղերի տարածուն ենթամաշկային արյունազեղումներ>>:

Դեպքի առթիվ 2019 թվականի սեպտեմբերի 10-ին ոստիկանության Գյումրի քաղաքի Կումայրիի բաժնում հարուցվել է թիվ 68165419 քրեական գործը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով:

2019թ. սեպտեմբերի 10-ին՝ ժամը 22:30-ին, հիշյալ հանցավոր արարքը կատարելու կասկածանքով ձերբակալվել է Սմբատ Գագիկի Հայրապետյանը:

2019թ. սեպտեմբերի 13-ին որոշում է կայացվել Սմբատ Գագիկի Հայրապետյանին ՀՀ քրեական օրենսգրքի 119-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով որպես մեղադրյալ ներգրավելու մասին:

2019թ. սեպտեմբերի 13-ին Սմբատ Գագիկի Հայրապետյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2019 թվականի սեպտեմբերի 08-ին, 09-ին և 10-ին, գտնվելով ալկոհոլի ազդեցության տակ, իր փաստացի բնակության վայր հանդիսացող Գյումրի քաղաքի Մ.Սարգսյան փողոցի 15-րդ տանը կենցաղային հարցի շուրջ՝ իր հետ նույն հասցեում բնակվող տատից՝ Աղունիկ Սմբատի Հայրապետյանից գումար պահանջելու և վերջինից մերժում ստանալու պատճառով վիճաբանել է նրա հետ և նշված երեք օրերի ընթացքում ֆիզիկական ուժեղ ցավ պատճառելու ուղղակի դիտավորությամբ պարբերաբար ձեռքերով հարվածներ է հասցրել Աղունիկ Հայրապետյանի մարմնի տարբեր մասերին, առանձին դաժանությամբ ծեծի ենթարկել վերջինին և գանգուղեղի, աջ թմբկաթաղանթի, մարմնի տարբեր տեղերի տարածուն ենթամաշկային արյունազեղումների ձևերով մարմնական վնասվածքներ հասցնելով՝ Աղունիկ Հայրապետյանին պատճառել է ֆիզիկական ուժեղ ցավ:

2019թ. սեպտեմբերի 13-ին Սմբատ Գագիկի Հայրապետյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ Սմբատ Գագիկի Հայրապետյանը 20.07.2017թ.-ից հաշվառման մեջ է գտնվում <<Գյումրու հոգեկան առողջության կենտրոն>> ՓԲԸ-ի նարկոլոգիական դիսպանսերում՝ <<ափիոնատիպ նյութերի օգտագործում>> ախտորոշմամբ, իսկ 20.03.2018թ.-ից՝ <<հոգեկան և վարքի խանգարում ալկոհոլի գործածման հետևանքով, կախվածության համախտանիշ>> ախտորոշմամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են դատական հոգեբուժության բնագավառների հատուկ մասնագիտական գիտելիքներ, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245-րդ, 248-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. 68165419 քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսերի դատահոգեբուժական փորձագիտական հանձնաժողովի փորձագետներին, նրանց նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-342-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Փորձագետների պարզաբանմանն առաջադրել հետևյալ հարցերը՝

- Մեղադրյալ Սմբատ Գագիկի Հայրապետյանը նախկինում և հանրորեն վտանգավոր արարք կատարելու պահին հոգեկան հիվանդությամբ տառապել է, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ է տառապել և երբվանից:

- Եթե Սմբատ Գագիկի Հայրապետյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկել է արդյոք նրան իր գործողություններին հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից:

- Սմբատ Գագիկի Հայրապետյանը ներկայումս տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, եթե այո, ապա՝ ինչպիսի:

- Եթե Սմբատ Գագիկի Հայրապետյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա այդ հիվանդությունը զրկում է նրան ներկայումս իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակությունից, ինչպես նաև վերջինս կարող է մասնակցել քննչական և դատաքննչական գործողություններին:

- Սմբատ Գագիկի Հայրապետյանը մեղսունակ է, սահմանափակ մեղսունակ, թե անմեղսունակ:

- Սմբատ Գագիկի Հայրապետյանը հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչ տիպի հոգեբուժական հիվանդանոցում, հանրության համար վտանգ ներկայացնում է, թե ոչ և հակացուցված չէ արդյոք բուժումը:

3. Փորձագետների միջնորդությամբ տրամադրել քրեական գործի նյութերը, վերջիններիի կողմից նշանակված օրը փորձաքննության ներկայացնել փորձաքննվող Սմբատ Գագիկի Հայրապետյանին և նրա վերաբերյալ առկա բժշկական փաստաթղթերը:

ՀԿԳ ավագ քննիչ՝ Վ.Բ.Սամվելյան